ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1

«ԳՀԾՁԲ-001-2026-1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտերի բացման, գնահատման և ընտրված մասնակից ճանաչելու վերաբերյալ

ք. Երևան 5-ը հունիսի, 2026թ.

Ժամը՝ 16 ՍՍ

Հանձնաժողովի նախագահ՝ Արամ Մովսիսյան

Հանձնաժողովի անդամներ՝ Վահե Մացակյան
Սերյոժա Ջիլավյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Արմենուհի Վանոյան

Սույն եզրակացությունը կազմվել է «Արմենիա Թրի Փրոջեքթ» բարեգործական հիմնադրամի կարիքների համար «ԳՀԾՁԲ-001-2026-1» ծածկագրով գնանշման հարցման շրջանակում՝ անտառվերականգնման/անտառապատման աշխատանքների նախագծերի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) հաշվետվությունների մշակման և լիազոր մարմնի կողմից հաստատված պետական փորձաքննական եզրակացությունների ապահովման ծառայությունների գնման նպատակով

Գնանշման հարցմամբ նախատեսվել են հետևյալ չափաբաժինները՝

- Չափաբաժին 1՝ Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնքում 30 հա մակերեսով անտառվերականգնման/անտառապատման աշխատանքների նախագծի ՇՄԱԳ ծառայություններ:
- Չափաբաժին 2՝ Շիրակի մարզի Պեմզաշեն գյուղում 66 հա մակերեսով անտառվերականգնման/անտառապատման աշխատանքների նախագծի ՇՄԱԳ ծառայություններ:
- Չափաբաժին 3՝ Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքում 25 հա մակերեսով անտառվերականգնման/անտառապատման աշխատանքների նախագծի ՇՄԱԳ ծառայություններ

Հրավերով սահմանված ժամկետում ներկայացվել են հետևյալ հայտերը՝

1. «ԱՔՍԵՍՍ Քոնսալթ» ՍՊԸ-ի հայտը՝ չափաբաժին 1-ի համար:
2. «Արման Կանդարյան Նիկոլայի» ԱՁ-ի հայտը՝ չափաբաժիններ 2 և 3-ի համար:

Հանձնաժողովը արձանագրում է, որ ներկայացված հայտերի կազմերում առկա են հրավերով պահանջված հիմնական փաստաթղթերը, այդ թվում՝ դիմում-հայտարարությունները, գնային առաջարկները, հիմնական աշխատակազմի վերաբերյալ տեղեկությունները, մասնագետների համաձայնությունները և կենսագրական տվյալները:

Հայտերի բացման և նախնական ուսումնասիրության արդյունքում հանձնաժողովը արձանագրել է հետևյալը.

1. «ԱՔՍԵՍՍ Քոնսալթ» ՍՊԸ

«ԱՔՍԵՍՍ Քոնսալթ» ՍՊԸ-ն ներկայացրել է հայտ չափաբաժին 1-ի համար և առաջարկել է 2,400,000 ՀՀ դրամ ընդհանուր գին՝ առանց ԱԱՀ:

2. «Արման Կանդարյան Նիկոլայի» ԱՁ

«Արման Կանդարյան Նիկոլայի» ԱՁ-ն ներկայացրել է հայտ չափաբաժիններ 2 և 3-ի համար և առաջարկել է՝

- Չափաբաժին 2-ի համար՝ 2,450,000 ՀՀ դրամ ընդհանուր գին՝ առանց ԱԱՀ:
- Չափաբաժին 3-ի համար՝ 2,450,000 ՀՀ դրամ ընդհանուր գին՝ առանց ԱԱՀ:

Հանձնաժողովը ուսումնասիրել է մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերը և արձանագրել, որ մասնակիցների հայտերը, ըստ էության, համապատասխանում են հրավերի պահանջներին և ենթակա են բավարար գնահատման:

«ԱՔՍԵՍՍ Քոնսալթ» ՍՊԸ-ի հայտով ներկայացվել են մասնակցության հայտը, գնային առաջարկը և մասնագետների մասին տեղեկությունները:

«Արման Կանդարյան Նիկոլայի» ԱՁ-ի հայտով ներկայացվել են մասնակցության հայտը, գնային առաջարկը, հիմնական աշխատակազմի վերաբերյալ տեղեկությունները, մասնագետների համաձայնությունները, անձնագրերը, դիպլոմները և ինքնակենսագրականները:

Քանի որ յուրաքանչյուր չափաբաժնի համար ներկայացվել է մեկական հայտ, և տվյալ հայտերը գնահատվել են բավարար, հանձնաժողովը հիմք է ընդունում տվյալ մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները:

Չափաբաժնի անվանումը	Մասնակից	Մասնակցի կողմից ներկայացված գին (<< դրամ)	Հայտարարության մեջ նախատեսված գին (<< դրամ)
Չափաբաժին 1՝ Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնքում 30 հա մակերեսով անտառվերականգնման/անտառապատման աշխատանքների նախագծի ՇՄԱԳ ծառայություններ:	«ԱՔՍԵՍՍ Քոնսալթ» ՍՊԸ	2,400,000	2,500,000
Չափաբաժին 2՝ Շիրակի մարզի Պեմզաշեն գյուղում 66 հա մակերեսով անտառվերականգնման/անտառապատման աշխատանքների նախագծի ՇՄԱԳ ծառայություններ:	«Արման Կանդարյան Նիկոլայի» ԱՁ	2,450,000	2,500,000
Չափաբաժին 3՝ Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքում 25 հա մակերեսով անտառվերականգնման/անտառապատման աշխատանքների նախագծի ՇՄԱԳ ծառայություններ:	«Արման Կանդարյան Նիկոլայի» ԱՁ	2,450,000	2,500,000

Հանձնաժողովի եզրակացությունը

Վերոնշյալի հիման վրա գնահատման հանձնաժողովը եզրակացնում է՝

1. «ԳՀԾՁԲ-001-2026-1» ծածկագրով գնանշման հարցման շրջանակում ներկայացված հայտերը բացվել և ուսումնասիրվել են հրավերի պահանջներին համապատասխան:
2. «ԱՔՍԵՍՍ Քոնսալթ» ՍՊԸ-ի հայտը չափաբաժին 1-ի մասով գնահատել բավարար:
3. «Արման Կանդարյան Նիկոլայի» ԱՁ-ի հայտերը չափաբաժիններ 2 և 3-ի մասով գնահատել բավարար:
4. Չափաբաժին 1-ի ընտրված մասնակից ճանաչել «ԱՔՍԵՍՍ Քոնսալթ» ՍՊԸ-ին՝ 2,400,000 (երկու միլիոն չորս հարյուր հազար) << դրամ գնային առաջարկով:
5. Չափաբաժին 2-ի ընտրված մասնակից ճանաչել «Արման Կանդարյան Նիկոլայի» ԱՁ-ին՝ 2,450,000 (երկու միլիոն չորս հարյուր հիսուն հազար) << դրամ գնային առաջարկով:
6. Չափաբաժին 3-ի ընտրված մասնակից ճանաչել «Արման Կանդարյան Նիկոլայի» ԱՁ-ին՝ 2,450,000 (երկու միլիոն չորս հարյուր հիսուն հազար) << դրամ գնային առաջարկով:

Առաջարկել պատվիրատուին ձեռնարկել հետագա գործողությունները՝ ընտրված մասնակիցների հետ պայմանագրեր կնքելու նպատակով՝ հրավերի և գործող կարգավորումների պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Նիստին ներկա հանձնաժողովի անդամների և քարտուղարի հավաստումը ընդունված որոշումներին

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Արամ Մովսիսյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Վահե Մացակյան

_____ Սերյոժա Ջիլավյան

_____ Արմենուհի Վանոյան

Հանձնաժողովի քարտուղար՝